ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ 2020-2022ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտեր) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 14-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում ներկայացնում ենք Հայտերի վերաբերյալ հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

1. Հանձնաժողովի կողմից ներկայացված Հայտերի «Նպատակները և թիրախները ՄԺԾԾ ժամանակահատվածում» բաժնում անհրաժեշտ էր հղում տալ նաև Ազգային ժողովի 2019թ. փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրին, մասնավորապես՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման վերաբերյալ դրույթներին:
   ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1: Առաջարկում ենք Հանձնաժողովի ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել՝
   - Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով,[1]
   - Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիայի ռազմավարական փաստաթղթերով և տարեկան ծրագրերով:[2]

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.2: Առաջարկում ենք, որ որպես ռազամավարական ուղղություն նախատեսվի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ընտրական գործընթացների մատչելիության ապահովումը, որը բխում է սոցիալական արդարադատության գաղափարից և ուղղված է ընտրական գործընթացների բոլորին հասանելի լինելու սկզբունքի կիրառմանը:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

2. Հայտերի ծրագրերում սահմանված միջոցառումների համար նախատեսված գործողությունները, արդյունքային (քանակական և որակական) ցուցանիշները պետք է բխեն և համապատասխանեն ծրագրերում սահմանված թիրախներին և նպատակներին: Հայտերում սակայն հստակ չէ գործողությունների բովանդակային մասը: ***Օրինակ 1,*** Հայտերի 1096 ծրագրի Հավելված 3-ի Մաս 3-ում սահմանվել է ոլորտի կարգավորման վերաբերյալ հանրային գոհունակության գնահատականի գործիք: Համաձայն այս գործիքի ժողովրադավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող նվազագույնը 30 հասարակական կազմակերպությունների շրջանում անցկացված հարցման արդյունքներով պետք է

[1] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.mfa.am/filemanager/eu/cepa.pdf :
[2] Տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://aceeeo.org/en/about-us/strategy :

պարզ դառնա հանրության կողմից ԿԸՀ գործունեության նկատմամբ գնահատականը: Մինչդեռ անհասկանալի է, թե ինչու հասարակական կազմակերպությունների կողմից, ինչու թվով 30 և ինչ մեթոդաբանությամբ պետք է այս հարցումը իրականացվի: Հիմք ընդունելով, որ Հայտերի կազմման մեթոդական ցուցումներում շեշտադրում է կատարվում ծրագրերի նորարարական լինելու վրա, ապա առաջարկում ենք, որ ընտրական գործընթացների վերաբերյալ գնահատականը տրվի էլեկտրոնային գործիքների միջոցով, հասարակության լայն զանգվածների կողմից և ոչ թե միայն թվով 30 հասարակական կազմակերպությունների կողմից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1: Առաջարկում ենք ԿԸՀ նախաձեռնությամբ ստեղծել էլեկտրոնային մեկ միասնական գնահատման համակարգ, որի միջոցով քաղաքացիները անմիջապես ընտրությունն անելուց հետո կգնահատեն ընտրական տեղամասային (տարածքային, կենտրոնական) հանձնաժողովների գործունեությունը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2: Առաջարկում ենք ներդնել ԿԸՀ աշխատակիցների աշխատանքային գործունեությունը գնահատող գործիքներ, ինչպես նաև առավել խորացված կազմակերպել նրանց վերապատրաստման դասընթացները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3: Առաջարկում ենք ընտրական գործընթացների կազմակերպման, անցկացման մասին իրազեկման հոլովակների, պաստառների և այլ տեղեկատվական նյութերի հրապարակումը կենտրոնացնել մազերում: Հիմք ընդունելով, որ քաղաքացիներին իրազեկելը առաջնային է ԿԸՀ-ի համար, գտնում ենք, որ շեշտադրում պետք է կատարել մարզերում՝ ավելացնելով իրազեկման բնույթ կրող տեղեկատվական նյութերի հրապարակումը:

Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

3. Ծրագրերով սահմանված նպատակներին և իրականացվելիք միջոցառումներին համապատասխան՝ անհրաժեշտ է ֆինանսական ծախսերը նախատեսել հստակ, հիմնավորված, ճշգրիտ հաշվարկներով և հնարավորինս իրական կանխատեսումներով: Հայտերում շարունակական բնույթի հայեցողական ծախսերում նշված է ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում: Գտնում ենք, որ սա էապես ազդում է ընտրական գործընթացի թափանցիկության, ընտրական հանձնաժողովներում ներառված անձանց արհեստավարժության և արդարության սկզբունքներով առաջնորդվելու վրա: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք, որ ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումը կրի պարտադիր բնույթ և նրանց ուսուցանվի նաև հակակոռուպցիոն արժեքների և բարեվարքության սկզբունքների վերաբերյալ: